

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՀԱՄԱՌՈՑ ՆՅՈՒՄ ԻՐ ԿԵՂԵՒԻ
ՆԻ ԴՈՐՆԻ ՄԱՍԻՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՒԹԻ ՅՈՒՆԼԵԱՆԱԿԱՆ
ՅԱՆՁՆԱԹՈՒՄԻ



ՅԳ. ԱԶԳՍՆ
ՊԵՏՐՈՒԹՅՆ 1930



ՆՕԹԵՐ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԱՌՔԻԻ

Այս աարի Ապրիլ 6 ին ամէն կողմ հանդիսաւօրոպէս պիտի տօնուի հայ վիշաի տաղանդաւոր երգիչ Աւետիս Ահարոնեանի քառասուն տարուայ գրական գործունէութեան Յորելեանը: Այս առթիւ Նորին Ս. Օծութիւն Սահակ Բ. Վեհափառ Կաթողիկոսը հետեւեալ գրութիւնը ուղղած է Լիբանանի Հայոց Կաթողիկոսական փոխանորդ Գերապատիւ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Կարօեանի.

Մի ՄՈՌԱՒ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ, ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԸ, ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ ՀԱՅՅՈՒՆ ՅԱՒԸ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՂՈՒՄԸ ԷՍՅԵՐ ԵՒ ԼԱՅՈՒՅԵՐ Է ՈՉ ԻՐԻԵՒ ՅԵՂԱՓՈՒԿԱԿԱՆ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ՅԵՂԱՓՈՒԿԱԿԱՆԵՐԸ ՁԵՆ ԼԱՐ, ԿԸ ԳՈՐԾԵՆ. ԱՀԱՐՈՆԵԱՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳԱԻԱՌԻ ՄՐՏՅԱՒ ԶԱՒԱԿ, ԾՆԱԾ, ՄՆԱԾ ԱԼԵՓԱՌ ՄԱՍԻՍԻ ՔՂԱՆՅՔԻՆ ՏԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԵՏ ԿՐԵՐ, ՏԱՌԱՊԵՐ ՈՒ ԳՐԵՐ Է. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՉ ԻՄՍ Է ԵՒ ՈՉ ՁԵՐԸ, ԱՅԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԻՆ:

Իր կարգիմ, Փարիզի Յորելեանական Կեդրոնական Յանձնախումբը ամիսներ առաջ կը հրատարակէր հետեւեալ կոչը.

ՓԱՐԻՁ 1 Փետրուար 1929

Այս աարի կը լրանայ Աւետիս Ահարոնեանի գրական գործունէութեան քառասնամեակը:

Անտրոնետնի գործը մաս կը կազմէ այսօր մեր ազգային սասցուածքին, և, իբր մեր սերունդին ժառանգութիւնը, սրբազան աւանդի մը պէս պիտի անցնի մեզմէ ետքը եկողներուն:

Ինչպէս ազգային բանաստեղծն է ան, բառին լայն առումով, և իր բոլոր հոգևովը և սրտովը ապրած է այն բոլոր կրօնները որոնք մեր ցեղին բաժինն եղան այս վերջին յիսնամեակին: Մեր Յաւը երգած է իր եղերական բազմադիմի պէսպիսութեանը մէջ ու, անոր քով, մեր Յոյսին սլացքը առաջնորդած է դէպի այն իտէլաները որոնց մեր ցեղը կը ձգտի գարբել ի վեր անասան հաւատքով: Տառապանքէն դէպի Ազատութեան ճամբան, հին օրերու մարգարէի մը պէս, իր կսկիծը և կարեկցութիւնը աղաղակած է բարձրակալ, և իրեն ակնադիշ բազմութիւնները, ուղղած է դէպի Աւետեաց երկիրը:

ՊՈՒՏ ԸՄ ԿԱՔԷՆ մինչև ԼՄ ԳԻՐԳԸ, մեր ցեղին կէս դարու կեանքն է որ կը խառնայ իր գործին մէջ: Իբր վիպագիր, թատերագահ, բանաստեղծ, ընկերաբան, հրատարակագիր և հետնոր, մեր կեանքին բոլոր աթառայաութիւնները արձագանգ գտած են իր մէջ, ու ինք զանոնք Հայութեան փոխանցած է իր խոր զայցողութեան մէջէն:

Բնական էր որ Հայութիւնը պարականութիւն զգար, այս քառասնամեակին առթիւ, իր սիրոյ և յանգանքի հարկը մատուցանելու հայ Յաւին ու Յոյսին մեծ երգիչին: Ուստի որոշուած է, ընդառայ երթալով ամէն կողմէ յայտնուած միահամուռ փառաքին, յառաջիկայ Ապրիլ 6 ին մեծ հանդիսութեամբ մը տօնել այս տարեգարծը Փարիզի մէջ, և հրուէր կարգալ ամէն հայ խմբուերութեանը աշխարհի որ կողմն ալ որ զըտ-

նուրիս; իրենց կարգին հանդէսներ սարքելու այս՝ զըրական քառասնամեայ գործունէութիւնը փառաբանելու համար:

Յորելեանի Կեդրոնական Յանձնաժողովիս դիտաւորութիւնն է այս առիթը օգտագործել Կրատարակելու համար Ահարոնեանի եթէ ոչ բոլոր երկերը, զոնէ կարեորագոյնները, որոնք այսօր սպառած են. և միանշամայն ստեղծել Գրական Հիմնադրամ մը, որուն հասոյթը ծառայէ հայ գրականութեան մեծարժէք զատակաւորներուն կենսաթոշակ մը կամ կենսաթոշակներ հաստատելու, սկսելով Ահարոնեանէ: Ուրիշ խօսքով Կեդրոնական Յանձնաժողովիս ցանկութիւնն է որ Ահարոնեանի Յորելեանը մշանջենապէս ծառայէ Հայ Գրականութեան, և Յանձնաժողովը կոչ կ'ուզէ ընդհանուր Հայութեան որպէսզի կարենայ արժանաւորապէս իրագործել իր այս տաղադրութիւնը:

**ՅԱՐԵԼԵԱՆԱԿԱՆ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ
ՅԱՆՁՆԱԺՋՈՂՈՎ**

Լիբանանի Կեդրոնական Յանձնախումբս աւելորդ չի նկատեր, այս առիտ հակիրճ տողերու մէջ ներկայացնել մեծանուն Յորելեանի կենսագրական գիծերը եւ մէկ ցամկը իր հրատարակած երկերուն:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕՓԵՐ

ԱՐԵՅԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ, զաւակը Գարսկաստանէն զաղթած ընտանիքի մը, ծնած է 4 Յունուար 1866 ին, Մասիսի ստորոտը, Արարատեան դաշտին մէջ փոռած, Իզդիր գիւղաքաղաքին մերձ, Իզդիրմաւան գիւղակին մէջ:

Հայրը, Առաքել, աշխատասէր եւ առաքինի դարբին մըն էր. մայրը ամբողջ զաւառին մէջ միակ կարգաւ գրել զհացող կինը, որմէ Աւետիս կը սորվի գրել կարգաւ, առաջին անգամ, երբ դեռ եօթը տարեկան էր:

ԱՀԱՐՈՆԵԱՆ իր նախնական ուսումը ծննդավայրին մէջ առնելէ յետոյ, կը յաճախէ Էջմիածնի Գէորգեան ձեմարանը: Քսան տարեկանին կ'գրադի ուսուցչութեամբ իր հայրենի գիւղին մէջ եւ այլուր մինչեւ 1898:

Ապա ԱՀԱՐՈՆԵԱՆ կանցնի Եւրոպա, կ'ուսանի նախ Լօզանի համալսարանին մէջ, յետոյ կ'երթայ Փարիզ, հետեւելու Սորպոնի գրական, փիլիսոփայական ու պատմական դասընթացքներուն: Կովկաս վերադարձին կը նուիրուի հրապարակագրութեան, վարելով յաջորդաբար ՄՈՒՐՃԻ, ՅԱՌԱՋԻ, ԱՆՔԻ եւ ԶԱՆԳԻ խմբագրութիւնը:

1909 ին երբ Թիֆլիսի Ներսիսեան վարժարանի տեսուչն էր, Ռուսական իշխանութիւններուն կողմէ ամբաստանուեցաւ որպէս հայ ցեղի ազատագրութեան համար Թուսիոյ դէմ գրիչ շարժող մը, ու կովկասահայ կարգ մը մտաւորականներու հետ ձերբակալուելով Մեանիսի բանտը առաջնորդուեցաւ, ուր մնաց մինչեւ 1911 թուականը, երբ՝ մասամբ թրքահայ ծանօթ մտաւորականներուն, Դուբեան Պատրիարքին եւ Իզմիրլեան Կաթողիկոսին դիմումներուն հետեւանքով եւ մանաւանդ տրուած 10,000 ռուբլի երաշխաւորութեամբ ազատ արձակուեցաւ ու եկաւ Պոլիս, ուրկէ անցաւ Եւրոպա: Հոն ճշմարիտ արքայորականի մը կեանքը ապրեցաւ, զտեղէն հինգ տարի, մինչեւ հռչակմուր ընդհանուր պատերազմին երբ Ռուսական կառավարութիւնը թոյլատրեց իր Կովկաս վերադարձը:

1917 ին թիֆլիսի մէջ կազմուած Կովկասի Հայոց Ազգային Խորհուրդի նախագահ ընտրուեցաւ 1918 ին նախագահեց Հայաստանի նորակազմ Հանրապետութեան կողմէ Պոլիս բանակցելու գացող պատուիրակութեան: Ջինադադարէն վերջ իբրեւ նախագահ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան՝ ներկայ եղաւ Փարիզի Վեհաժողովին եւ 1920ին պտրազրեց Սէվրի Դաշնագիրը:

Ահարոնեան 1886 ին իր մուտքը գործեց հայ գրականութեան անդաստանէն ներս «Արաքսի Յորդումը» վերնագրով գրութեամբ: Ապա յարատեւ վերելքով մը ստորագրեց բազմաթիւ գրական եւ զեղարուեստական էջեր, որոնցմէ մկ քանին թարգմանուած են ֆրանսերէնի, գերմաներէնի, անգլիերէնի, թուրքերէնի եւ այլ լեզուներու: Ստորեւ կը ներկայացնենք ամբողջական ցանկը իր երկերուն:

ԱՐԱՔՍԻ ՅՈՐԴՈՒՄԸ	հրատարակուած 1887 ին.
	Իր պապշին յօդուածք
2.— ՀՌՑ ԿԻՆԸ	հրատարակուած 1888—
	1894 ին. (յօդուածաբաթ)
ՀՌԻՐԵՐ ՍԱՀՄԱՆԻ ՄԻՒՍ ԿՈՂՄԻՑ	1894 ին »
ՊԱՏԵՆՐԵՆԵՐ ԹՐՔԱՀԱՅ	
ԳՆՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻՑ	1889 ին »
ԽԵՆՃԵՐԸ	հրատարակուած Ա. 1902 Բ. 1909 ին
ԱՀԱՏՈՒԹԵԱՆ ԶԱՆԱՊԱՐՀԻՆ	» ԶՈՐՍ ԱՆԴԱՄ ՀԸ-
	ՐԱՑԱՐԱԿՈՒԱԾ 1898—1926
ԻՏԱԼԻԱՅՈՒՄ	հրատարակուած 1902—1903
ԵՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ	» 1902—1913
ՄՐՐԻԿԻ ՍՈՒՐԲԸ	» 1903

ԱՐԱՋԸ	Կրտսւարբանիւսած	1904
ՄԱՅՐԵՐԸ	»	1904
ԿԵԱՆՔԻ ՎԷՊԸ	»	1908
ՄԵՐԺՈՒԱԾՆԵՐԸ	»	1898—1900
ՀՐՈՒԹԻՒՆ	»	1909—1924
ՄՈՒԴՐՆԵՐԻ ՏԱԿԻՑ	»	1924
ԱՐՑՈՒՆՔԻ ՀՈՎԻՏԸ	»	1907
ԳԱՅԼԵՐԸ ՈՌՆՈՒՄ ԷՒՆ		
ԵՒ ԱՇՆԱՆ ԳԻՇԵՐԻՆ	»	1907
ԽԱՒԱՐԻ ՄԷՋ ԵՒ ԱՆԴՈՒՆԴԸ	»	1908-9 և 1910
ՊԱՐՏՈՒԱԾՆԵՐ	»	1912
ԻՄ ԲԱՆՏԸ	»	1911
ԱՍՏՈՒ ԿՐԱԿԸ	»	1912
ԵՐԱՋՆԵՐԻՍ ԱՇԽԱՐՀԸ	»	1910—1911
ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ		
ԴԷՊԻ ԵԳԻՊՏՈՍ	»	1913
ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԱՄԱՐ	»	1920
ՃԱՄԲՈՐԴԸ	»	1926
ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԷԱՆ	»	1926
ԿԱՐՕՏ ՀԱՅՐԵՆԻ	»	1927
ԻՄ ԳԻՐՔԸ	»	1927
ԱՐԱԳԻՂՆԵՐ	»	1927
ԿԱԹՈՒՇԿ	»	1927
ԻՏԱՎԿԱՆ ԷՍԿԻՋՆԵՐ	»	1928—1929
ՌԱՅՅԻ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿ	»	1925—1928

